2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

Օգոստոս

Իրականացվել է դասագրքերի բաշխում : Բոլոր աշակերտներն ապահովվել են դասագրքերով: Քննարկվել և հաստատվել է առարկայական ծրագրերի թեմատիկ պլանները, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, մանկավարժների, տնօրենի տեղակալի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանները, որոնք տեղադրվել են պաշարների շտեմարան: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորումների նիստեր: Կատարվել է դասաբաշխում: Քննարկվել և հաստատվել է ներդպրոցական վերահսկողության տարեկան պլանը:

Սեպտեմբեր

Հրավիրվել է մանկավարժական խորհրդի անդրանիկ նիստ, հաստատվել է մանկավար ժական խորհրդի կազմը: Հրավիրվել է աշակերտական և ծնողական համադպրոցական ժողովներ, ընտրվել է դասարանական և դպրոցի աշակերտական և ծնողական խորհուրդ ներ, ծնողական ժողովներ: Հրավիրվել է կառավարման խորհրդի նիստ, քննարկվել են տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները, ամենամյա ծախսերի նախահաշվի փոփո խությունները: Քննարկվել և կազմվել է բյուջեի նախագիծը և բյուջետային օրացույցի ժամանակացույցը: Կազմվել է առաջին կիսամյակի դասացուցակ և տեղադրվել է էլեկտրոնային մատյանում : Emis.am էլեկտրոնային համակարգում կատարվել են բոլոր աշխատանքները: Կատարվել է նախնական մնացորդային գիտելիքի ստուգում 10-րդ դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից: Հրավիրվել են առարկա յական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտորնային մատյանները: Ըստ ՆԴՎ ժամանակացույցի իրականացվել են դասալսումներ թիրախային դասարաններում: Դպրոցում ընդունելության կազմակերպում, ամփոփում: Կոմպլեկտավորվել են հոսքային դասարանները, կահավորվել համապատասխանաբար:Նշանակվել են դասղեկները,ընտրվել մմ նախագահները, ձևավորվել են խմբակներ: Անցկացվել են տնօրենին կից խորհրդակցու թյուններ: Ըստ ՆԴՎ-ի պլանի՝ կատարվել են դասալսումներ 10-րդ դասարաններում: Տրվել է գրավոր աշխատանք՝ 10-րդ դասարաններում՝ հայոց լեզվից: Իրականացվել են դասալսումներ սկսնակ ուսուցիչների մոտ: Քննարկվել և հաստատվել են ուսումնական նախագծերի թեմաներ:Կայացել է մենթի դպրոցների հետ և ԿՏԱԿ-ի հետ հանդիպում, կարգավորվել դասացուցակը: Անցկացվել է « Գիտելիքի օր» միջոցառումը;

Հոկտեմբեր

Իրակացվել է բյուջեի նախագծի քննարկում և լրամշակում: Իրականացվել է առարկայական օլիմպիադաների անցկացման նախապատրաստական աշխատանքներ, շարունակվել են դասալսումները 10-րդ դասարանում: Վերլուծվել է նախորդ դասարանում իրականացված դասալսումների արդյունքները, տրվել համապատասխան հանձնարարություններ: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, քննարկվել են 10-րդ դասարանում տրված գրավոր աշխատանքների արդյունքները: Ստուգվել են էլեկտորնային մատյանները: Հրավիրվել է

մանկավարժական խորհրդի նիստ՝ համաձայն հաստատված օրակարգի: Կատարվել են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: Ձևավորվել են «Փառքի անկյան»,Ձեռնարկատիրական կրթության լաբորատորիա՝ «Մի գդալ սեր» սրճարան:Անցկացվել է ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ ըստ կարգի: Դիտարկվել, քարտեզագրվել են նոր ուսումնական տարվա խնդիրները:Կազմակերպվել են ծնողական եւ աշակերտական խորհուրդների ընտրություններ:Հաստատվել են ծնողական ժողովների ժամանակացույցը, քննարկվել օրակարգերը: Իրականացվել է «Նորեկի օրհնության օր» ավանդական միջոցառումը: Կայացել է հանդիպում աշակերտների հետ՝ «Դասը վարում է տնօրենը»:Իրականացվել է «Ամսվա լավագույն աշակերտի» ընտրություն, պարգևատրում:Անցկացվել են սեմինարներ՝ «Գնահատման տեսակները», « Նախագծային աշխատանք» թեմաներով: Անցկացվել են տնօրենին կից խորհրդակցություններ: Ըստ ՆԴՎ-ի պլանի՝ կատարվել են դասալսում ներ:Իրականացվել է հայագիտական մեթոդմիավորման աշխատանքների ուսումնա սիրություն, վերլուծություն: Իրականացվել են սեմինարներ՝ «ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցեսի ընթացքում», «Կարողունակություններ» թեմաներով:

Նոյեմբեր

Հրավիրվել է տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի, ՄԿԱ , առարկայական մեթոդական միավորումների նախագահների՝ տնօրենին կից խորհրդակ ցություններ, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական հարցեր: Ձևավորվել է առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմը, օլիմպիադաների դպրոցա կան փուլի հարցաշարերը: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտորնային մատյանները: Հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ՝ համաձայն հաստատված օրակարգի: Կատարվել են դասալսումներ հերթական 10-րդ դասարանում, քննարկվել, ապահովվել հետադարձ կապ: Իրականացվել է «Նոյեմբերը բնագիտության շնչով» բնագիտության միամսյակ, ամփոփվել արդյունքները: Դիտարկվել է բնագիտական մեթոդմիավորման աշխատանքները, կատարվել վերլուծություն, պլանավորվել հետագա աշխատանքը: Կազմակերպվել է սեմինար՝ « Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունները ներկայացնող: Իրականացվել է «Ամսվա լավագույն աշակերտի» ընտրություն, պարգեւատրում:Կազմակերպվել է առարկայական օլիմպիադա ների ներդպրոցական փուլը:

Դեկտեմբեր

Ամփոփվել է առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքները: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտորնային մատյանները: Հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ՝ համաձայն հաստատված օրակարգի: Ստուգվել է առաջին կիսամյակի ծրագրի կատարողականը, թեմատիկ, գործնական աշխատանքների և բանավոր հարցումների քանակի պահպանումը, կատարվել է սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում, հրավիրվել են ծնողական ժողովներ, աշակերտական և ծնողական խորհուրդներ: Ամփոփվել է սեպտեմբերից-դեկտեմբեր ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված «Սասնա ծռեր» և Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոցի կողմից կազմակերպված «Երբ բացում ես Աստվածաշունչը» նախագծերը, մասնակից աշակերտները և նրանց ղեկավարները պարգևատրվել են շնորհակալագրերով և հուշանվերներով: Կատարվել է 12-րդ դասարանի դասաբաշխում՝ համաձայն աշակերտների դիմումների: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման

նիստեր, ստուգվել էլեկտրոնային մատյանները: Կատարվել են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: Իրականացվել են դասղեկա կան ժամերի դիտարկում, 10-րդ դասարաններում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծություն, հետադարձ կապի ապահովում:Գնահատվել է Մմիավորում ների աշխատանքների արդյունավետությունը՝ ըստ ՆԴՎ պլանի: Իրականացվել է տնօրենի և դասարանական աշակերտական խորհուրդների հանդիպում-քննարկում: Քննարկվել , ընտրվել է «Ամսվա լավագույն» աշակերտը, պարգևատրվել: Նախապատրաստվել է պետական ավարտական քննությունների պատշաճ կազմակերպումը :

Հունվար

Կատարվել է դասաբաշխում,կազմվել է 2-րդ կիսամյակի ուսումնական պլանը,դասացուցակը, 12-րդ դասարանում ձևավորվել են առարկայական խմբեր: Կազմակերպվել են 12-րդ դասարանի պետական ավարտական քննություններ, հրավիրվել է կառավարման խորհդի նիստ: Կազմակերպվել են Բանակի օրվան նվիրված միջոցառումներ: Ներդպրոցական վերոհսկողության իրականացման շրջանակում կատարվել է մատենավարության ստուգում, դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների ստուգում: Ստուգվել են ԱՈԻՊ-ների լրացումները, հրավիրվել են աշակերտական և ծնողական խորհրդի նիստեր: Կատարվել են լրացուցիչ աշխատանքներ առարկայական օլիմպիադաների տարածքային փուլ անցած աշակերտների հետ : Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտրոնային մատյանները: Կատարվել են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: Որպես մենթոր դպրոց՝ հեռավար դասավանդող ուսուցիչների հետ անցկացվել է քննքրկում, դասլսումների վերլուծություն:Իրականացվել է «Ամսվա լավագույն» մրցույթ, հաղթողը պարգևատևվել է :

Փետրվար

Ամփոփվել է առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի արդյունքները: Մարզային փուլ անցած աշակերտների հետ իրականացվել են լրացուցիչ պարապմունքներ: Կատարվել է մշտադիտարկում հերթական ատեստավորում անցած ուսուցիչների մոտ, որի արդյունքում պարզ է դարձել, որ առկա է դասավանդման արդյունավետության բարձրացում: Հանձնարարվել է մմ նախագահներին և փոխտնօրենին դասալսումներ իրականացնել 2023թ. հերթական ատեստավորում անցած ուսուցիչների մոտ կարիքների գնահատման համար: Պահպանվել է սանիտարահիգենիկ վիճակը և ջերմային ռեժիմը: Ներդպրոցական վերոհսկողության իրականացման շրջանակում կատարվել է մատենավարության ստուգում, դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների ստուգում: Ստուգվել են ԱՈԻՊ-ների լրացումները, հրավիրվել են աշակերտական և ծնողական խորհրդի նիստեր: Կազմակերպվել է Տեառնընդառաջին նվիրված միջոցառում: Հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ՝ համաձայն հաստատված օրակարգի: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտրոնային մատյանները: Կատարվել են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: Իրականացվել է «Փետրվարը Մայրենիի ամիս» միջոցառումների շարքը: Իրականացվել է «Ամսվա լավագույն» մրցույթ, հաղթողը պարգևատևվել է :

Մարտ

Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտորնային մատյանները, աշակերտական և ծնողական խորհրդի նիստեր, կազմակերպվել է կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, բաց դասեր՝ ըստ մեթոդական միավորումների տարեկան աշխատանքային պլանների: «Օտար լեզուների» բնագավառի ուսուցիչները իրականացրել են նախագծային աշխատանքներ ՝ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից հայտարարված «Բացահայտենք և հետազոտենք աշխարհը» նախագծին մասնակցելու համար: Կազմվել է բյուջեի մասին տարեկան հաշվետվություն և ներկայացվել հրապարակման: Կատարվել են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ: Իրականացվել է «Ամսվա լավագույն» մրցույթ, հաղթողը պարգևատևվել է :

Ապրիլ

Ապրիլ ամսին հրավիրվել է մանկավարժական խորհրդի նիստ, որտեղ քննարկվել է 2022-2023 ուստարվա պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման կարգը: Հրավիրվել են առարկայական մեթոդական միավորման նիստեր, ստուգվել էլեկտորնային մատյանները, ծրագրի կատարողականը, բանավոր հարցումների և գրավոր աշխատանքների քանակի պահպանության հարցը: Հանձնարարվել է մեթոդական միավորումներին 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների համար կազմել առնվազն 3 տարբերակով քննական և ստուգողական աշխատանքներ: Հրավիրվել են ծնողական և աշակերտական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են բացակայությունների և ուսումնադաստիարակչական հարցեր:Կազմվել և ԳԹԿ է փոխանցվել պետական ավարտական քննությունների մասնակիցների հայտերը: Իրականացվել են գրավոր աշխատանքներ 10–12-րդ դասարաններում հայոց լեզու, մաթեմատիկա առարկաներից: Իրականացվել է ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքերը: Մեծ շուքով նշվել են Ֆրանկոֆոնիայի օրերը: Կազմակերպվել է Պետական ավարտական քննություններին մասնակցող աշակերտների պատշաճ հայտագրումը: Իրականացվել է «Ամսվա լավագույն» մրցույթ, հաղթողը պարգևատևվել է :

Մայիս

Իրականացվել է Պետական ավարտական եւ Կենտրոնացված պետական ավարտական քննությունների նախապատրաստական աշխատանքներ: Վերլուծվել է առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցության արդյունքները, ամրագրվել հետագա աշխատանքները: Իրականացվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների վերլուծություն: Գումարվել են մեթոդմիավորման, մանկավարժական խորհրդի նիստեր՝ ըստ օրակարգերի: Իրականացվել են փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքներ::: Իրականացվել է «Ամսվա լավագույն» մրցույթ, հաղթողը պարգևատևվել է : Ըստ տարբերի ամիսների արդյունքների՝ կայացել է «Տարվա լավագույն» մրցանակաբաշխությունը: Իրականացվել են հանդիպում-ծանոթություններ հիմնական դպրոցների աշակերտների, ծնողների հետ: Նշվել է ավանդական դարձած «Երախտագիտության օր» միջոցառումը: Հիմնվել է Դպրոցի պատմության թանգարանը:

Հունիս

Անցկացվել են փոխադրական քննություններ: Վերլուծվել է մենթորական աշխատանքը: Մմիավորումները իրականացրել են նախնական դասաբաշխումներ: Կազմակերպվել են սեմինարներ ՝ նոր ՀՊՉ թեմայով: Ավարտուն տեսքի է բերվել դպրոցի շենքի վերանորոգման համար անհրաժեշտ փաստաթղթային տնտեսությունը: Կազմակերպվել են դասարանական ծնողական ժողովներ, կառավարման խորհրդի նիստեր, ուսուցչի կարիքի գնահատում: Իրականացվել է « Բաց դռների օր» մեծամասշտաբ միջոցառումը: